

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և «2012-2014 թվականների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներով սահմանված պահանջներին համապատասխան, մշակել է «2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է: Պետական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է Եռամյա Ծրագիր, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների դրոշման համար՝ Տարեկան Ծրագիր:

Եռամյա Ծրագիրը հաստատվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ներկայացմամբ: Այն ներառում է պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղություններն ըստ երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական բնագավառների: Եռամյա Ծրագրի կատարումը և ֆինանսավորումը պայմանավորված է և բխում է յուրաքանչյուր տարվա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, Տարեկան Ծրագիրը հաստատվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի ներկայացմամբ:

Ծրագիրը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև մյուս պետական մարմինների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից ընդհանուր համակարգման միջոցով իրականացվող պետական վիճակագրական դիտարկումներում ընդգրկված ցուցանիշների (և դրանց հավաքագրման, մշակման, ամփոփման, հրապարակման աշխատանքների) ցանկը, ինչպես նաև դրանց հաշվարկման կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Ծրագիրը ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական աշխատանքների ցանկը (հավաքագրման աղբյուրները, ներկայացման և աշխատանքի կատարման (ցուցանիշի մշակման) ժամկետները և հրապարակումները, որտեղ պետք է տեղադրվեն վերջիններս)՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Ծրագիրը մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումները, տնտեսությունում տեղի ունեցող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացրել վիճակագրական տեղեկատվություն սպառողներին (օգտագործողներին) ապահովելու առավել ճշգրիտ, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական հրապարակումներով:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից է սպառողներին (օգտագործողներին) շուկայի պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանքի տրամադրումը:

Պետական վիճակագրական աշխատանքների կատարելագործմանն ուղղված միջոցառումներից են.

ա) միջազգային չափանիշներով վիճակագրական մեթոդաբանության կատարելագործման, միասնականացման և ներդաշնակեցման, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից պաշտոնապես հրապարակվող սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակին վերաբերող ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, համագործակցության շրջանակում, շարունակական գործունեությունը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հետ,

բ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում պարբերաբար կազմակերպվող սեմինար-խորհրդակցությունները և դասընթացները, ինչպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների դասավանդմամբ և (կամ) մասնակցությամբ:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում պարբերաբար կազմակերպվող սեմինար-խորհրդակցություններին և դասընթացներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների մասնակցությունը,

գ) վիճակագրական տվյալների հավաքագրման, կուտակման, մշակման և տարածման բնագավառներում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը և կիրառումը (մեթատվյալներ, տվյալների հիմնապաշար, ինտրանետ, ծրագրային փաթեթներ և այլն),

դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջում տեղադրված հրապարակումների տեղեկատվական բազայի կատարելագործումը, վիճակագրական տեղեկատվության սպառողների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ինտերնետային էջից «Օն-լայն» ռեժիմով ամփոփ տեղեկատվության տրամադրման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը,

ե) վիճակագրության համակարգային զարգացման համար նախադրյալների ապահովման, վիճակագրության մեթոդաբանական կարողությունների զարգացման և կանոնակարգման, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման նպատակով՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտով սահմանված ցուցանիշների և դրանց մեթատվյալների պարբերական արդիականացման աշխատանքների ապահովումը,

զ) պետական վիճակագրությունում վիճակագրական դասակարգիչների մշակման ու ներդրման, ինչպես նաև արդեն իսկ ներդրված ու կիրառվող վիճակագրական դասակարգիչների կատարելագործման աշխատանքների շարունակականության ապահովումը,

է) վիճակագրական տեղեկությունների հավաքագրման արդյունավետության բարձրացման (ինչպես տվյալների որակի, այնպես էլ ռեսուրսների խնայողության ենթատեսքով), ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական դիտարկման փաստաթղթերով ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով՝ փոքր ձեռնարկատիրության սուբյեկտներից ընտրանքային կարգով վիճակագրական տեղեկությունների հավաքագրման մեթոդների ավելի լայն կիրառումը,

ը) որպես է) կետում նշվածի նախապայման, և որպես դրա հետևանք, տնտեսական գործունեության տեսակների ու դրանք իրականացնող սուբյեկտների քանակի աճով պայմանավորված, շարունակել վարչական ռեգիստրների և կիրառվող մեթոդաբանությունների կատարելագործման աշխատանքները:

Վիճակագրական տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով.

ա) երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների գծով վիճակագրական տեղեկատվությունը տարածվում է (անվճար) բազմաթիվ սպառողների (պետական մարմիններ, հասարակական, գիտության և կրթության ոլորտի կազմակերպություններ, մասնավոր հատված և այլն) միջև, նաև տրամադրվում է զանգվածային լրատվամիջոցներին մամուլի հաղորդագրությունների տեսքով՝ համաձայն ծրագրի հավելված 3-ում նշված ժամանակացույցի:


Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների կտրվածքով հրապարակումները (շրջանի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների գծով) իրականացնում են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության շրջանային ստորաբաժանումները:

բ) Ծրագրի հավելված 3-ում ներառված վիճակագրական բոլոր հրապարակումների առնվազն 2-ական օրինակ տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գրադարանին,

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային կայք էջում հայերեն (հնարավորության սահմաններում նաև ռուսերեն և անգլերեն) լեզվով գեղեղվում է հիմնական վիճակագրական տեղեկատվությունը:

Ծրագրում ներառված աշխատանքների (ցուցանիշների) կառուցվածքը ներկայացված է համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հաստատված Տվյալների տարածման ընդհանուր համակարգի և Տվյալների տարածման հատուկ ստանդարտի բաղադրիչների և ենթադրում է տվյալների տարածման հետևյալ չորս հիմնական պահանջների (չափորոշիչների) պահպանումը՝ տվյալների ընդգրկվածություն, պարբերականություն և ժամանակայնություն, մատչելիություն, ամբողջականություն ու որակ:

Ծրագրի I հավելվածում աշխատանքների (ցուցանիշների) արտացոլման համար օգտագործվել է վեցանիշ ծածկագիր, որտեղ.



◆ I նիշը աշխատանքի (ցուցանիշի) համարն է ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման ընդհանուր համակարգի և Տվյալների տարածման հատուկ ստանդարտի հատվածների,

◆ II նիշը հատվածի տրոհումն է ըստ ենթահատվածների,

◆ III նիշը աշխատանքի (ցուցանիշի) տրոհումն է ըստ ոլորտների (Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի դասերի, ցուցանիշների),

◆ IV նիշը ոլորտների մանրամասնումն է ըստ ենթաոլորտների:

Հաջորդ երկու նիշերը հատկացված են պետական վիճակագրական աշխատանքների ցանկի հերթական համարին՝ ըստ տվյալ հատվածի, ենթահատվածի, ոլորտի և ենթաոլորտի:

Այն դեպքում, երբ աշխատանքը (ցուցանիշը) տվյալ մակարդակից ներքև չի տրոհվում՝ հաջորդ դիրքերը լրացվում են զրոներով:

Օրինակ՝ 127001-ծածկագիրը նշանակում է իրական հատվածի(1), արտադրության ենթահատվածի(2), կազմակերպությունների տնտեսական գործունեության(7), կազմակերպությունների գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշները (0), իսկ վերջին երկու նիշերը արտահայտում են նշված ցուցանիշներին առնչվող պետական վիճակագրական աշխատանքների ցանկում հերթական համարը, որոնք անփոփոխելի են Եռամյա ծրագրերի գործողության ժամանակահատվածում:

Տվյալ ծածկագրի համար Ծրագրում նշվում են նաև վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) ամբողջական անվանումը (այունակ 3), տվյալ աշխատանքի(ցուցանիշի) իրականացման(հաշվարկման, հավաքագրման) հիմք հանդիսացող պետական վիճակագրական դիտարկման փաստաթղթ(եր)ի տեսակ(ներ)ը (այունակ 4), ընդգրկվածությունն ըստ կոնկրետ չափորոշիչի(չրջանների, գործունեության տեսակների և այլն) (այունակ 5), պարբերականությունը (այունակ 6), աշխատանքի կատարման, ցուցանիշի մշակման ավարտը (այունակ 7), ինչպես նաև այն վիճակագրական հրապարակումների ծածկագրերը (տես հավելված 3), որոնցում վերջիններս արտացոլվելու են (այունակ 8) :

Ծրագրի հավելված 3-ում հրապարակումների համար օգտագործվել է յոթանիշ ծածկագիր, որտեղ I – IV նիշերը համապատասխանում են Ծրագրի I-ին հավելվածի դասակարգմանը, V նիշը ներկայացնում է հրապարակման ծածկագիրը (օրինակ՝ վիճակագրական ժողովածու(1), վիճակագրական տեղեկագիր (2), մամուլի հաղորդագրություն (3), տեղեկատվական զեկույց (4) , օպերատիվ տեղեկատվություն(5)), իսկ VI և VII նիշերը ցույց են տալիս դրանց հերթական համարն ըստ տվյալ ոլորտների կամ գործունեության տեսակների հատվածների:

Վիճակագրական աշխատանքների կատարման (ցուցանիշների մշակման) Ծրագրում սահմանված ավարտի օրերը պարունակում են որոշակի վերապահումներ, կախված տարվա օրացուցային օրերի աշխատանքային օրերին համընկնելու հանգամանքից (օրինակ՝ Հավելված 1-ում 1. Իրական հատվածի 1.2. Արտադրություն(ծառայություններ) ենթահատվածի 1.2.1. Արդյունաբերություն բաժնի 121007 ծածկագրով աշխատանքի ավարտի օրը սահմանված է հաշվետու ժամանակաշրջանից հետո 20-րդ օրը):

Եթե որևէ աշխատանքի ավարտի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա աշխատանքի ավարտի օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը, իսկ ամսական պարբերականությամբ ժամկետայնություն ունեցող աշխատանքների ավարտի օր է սահմանվում տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը՝ ոչ ուշ, քան հաջորդող ամսվա 1-ը: